


ԲԱԺԱՆՈՐԳԱԳԻՆ
 Պուլիարիոյ համար
 Տարեկան ֆրք. 10
 Վեցամսեայ " 5
 Արտասահման
 Տարեկան ֆրք. 12
 Վեցամսեայ " 6
 ԿԱՆԻՒԼԻ



Հասցե
 DIRAN PAPAZIAN
 RUE DRAGOMAN
 K. STEPAN
 BULGARIE VARNA

ՇԱԲԱԹԱՅԱՆԴԵՍ. ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԻԵՇՏԱԿԱՆ

Երբ կ'ուզեմք «Հայեղի» ին մեջ աղոտ երեւնալ,

Պարսիք սիրուն եւ ազնիւ դեմք մը ունենալ:

ԱԶԳԱՅԻՆ

(Այսօրուան քղաքներ)

Սուլթանայէն այս առաւօտ ստացանք նախակ մը՝ որմէ կը տեղեկանանք թէ այդ քաղաքէն երեք ժամու չափ հեռու գտնուող Կուրա Հոմօր քաղաքը ապրիլ 29ին ամբողջապէս հրոյ ճարակ եղած է. այրեր են Հռոմէականաց եկեղեցին եւ Հրէից աղօթատունը: Հայոց եկեղեցին ալ բռնկած, բայց քիչ մնասով ազատած է. դժբաղդարար եկեղեցւոյ բոլոր կալուածները և քաղքին հայ բնակիչներուն տուններն ու բոլոր ստացուածքները այրած են: Սուլթանայի հայ եկեղեցւոյ հողաբարձութիւնը հանգանակութեան ձեռնարկեր է ի նպաստ այդ հրկիզեալներուն և հրաւէր կը կարդայ հեռաբնակ ազգայիններուն ալ, մասնակցել այդ հանգանակութեան:

— Լիւսիոյ թուրք շքադրամ տրուեցաւ կայս. պալատան Ա. ճարտարապետ Պալեան Սարգիս պէյի, որ հայելիի նախատիպար մը շիներ է 1900ի Բարիզի

արուեստահանդէսին հաճախ և արժանացեր է կայսերական գնահատման:

— Զատիկի Ա. օրը Պարսից հաճը իր անձնական բժիշկ տօքթ. Յ. Թիրեաքեանին՝ յատուկ պէրաքով մը ուղևոր ուղի յորջորջուելու պայմանաւ «Խան» պատուանունը տուեր է:

— Ի նպաստ գաւառացի կարօտեալներուն՝ այս շաբաթու Պատրիարքարան շրկուած է Աֆիօն Գալահիսարէ 50, Մաքրիդիւղէն 10 և Միխալէճէն 6 ոսկի:

— Եգիպտոսի առաջ. տեղապահ Տ. Յակոբ Աշոտ Եպիս. անձնական տկարութեան պատճառաւ հրաժարեր է այդ պաշտօնէն և հրաժարականը ընդունուեր է:

— Ռուսիոյ մէջ Կոյրերու խնամատար ընկերութեան Տիգրիսի մասնաճիւղը այս անգամ նոր շէնք մը շինելու ձեռնարկելով, 'ի նպաստ անոր՝ Ա. Ի. Մանթաշեան 2000, Մ. Յ. Արամեանց 1000 Ա. Ն. Անանեան 200, և Ս. Փրիդոնեան 100 ռուպլի նուիրած են:

— Պատրիարքական փոխանորդ Սրբազանը տեղեկացրեց ժողովին, որով հարկ եղած տնօրինութիւնը կը խնդրէ Վառնայի մէջ կրկնամուսնութիւն կատարող Տ. Գէորգ քահանային նկատմամբ, որ տեղւոյն Տէր Մարտիրոս քահանայի բացակայութենէն օգուտ քաղելով, իր ծննդավայրը ամուսնացած և զաւակներու տէր եղող անձ մը Վառնայի մէջ վերստին պսակած է ուրիշ կնոջ մը հետ: Փոխանորդ սրբազանը կ'առաջարկէ խիստ պատիժ մը տնօրինել յիշեալ քահանային համար «յօրինակ այլոց»:

Ու կրօն. ժողովը երեքշաբթի օր ուտն նստին՝ մէջ որոշած է առայժմ յիշեալ քահանան դադրեցնել պաշտօնավարելէ, մինչև որ պէտք եղած բընութիւնը աւարտի: (Արեւելք)

Ի նպաստ Հայաստանի սովերոց՝ Փիլիպի մէջ կազմակերպուած վիճակահանութիւնը կատարուեր է, որմէ դոյացեր է մօտաւորապէս 1500 ֆր: Ասկէց զատ, դեռատի պարոնայք Լեոն Գ. Թողատլեան, Սարգիս Հայրապետեան, Թադւոր Մ. Շիշմանեան և Պաղտատար Պ. Փափազեան 49 ֆր. 5 սնթ. հանգանակելով ազգայիններէ, յանձնած են Գեր. Բարթոլոմէոս Վ. Պաղճեանի, Պատրիարքարան ղրկելու համար:

Սիլիսդրէի մէջ ալ 20 նաշօլէօն հաւաքելով Պատրիարքարան ղրկուեր է:

ԼԱ ՀԷԻ

ՎԵՀԱԺՈՂՈՎԻՆ ՕՐԱԿԱՐԳԸ

Ռուսական կողաւարութիւնը մեծ և փոքր պետութիւնները զէնընկեցութեան վեհաժողովին հրաւիրած է, հետեւեալ օրակարգով.

1. Զեղչել մնայուն բանակաց թիւը:

2. Արգիլել ներմուծումը արդէն գտնուածներէն աւելի կոտորիչ և պայթուցիկ զէնքերու:

3. Արգիլել օդապարիկով ռումբեր և ասոնց նման պայթուցիկ նիւթեր արձակելը:

4. Արգիլել ընդծովեայ թորփիլանաւերն և «րէմ» ըստած գործիքի արձակումն զրահաւորաց վրայ:

5. 1864ի ձէնօվայի դաշնակցութեան վրայ յաւելումներ ընել. այսինքըն պատերազմի ատեն վիրաւորեալները չեղոք համարել. կարմիր խաչի ընկերութիւնները պաշտօնապէս ճանչնալ և անոնց գործակալները հալածել չի տալ պատերազմողներու կողմէ. և այլն:

6. Զեղոք հռչակել կեանք-փրկող նաւերն ծովային պատերազմի ժամանակ:

8. Վերաքննել 1874ի Պրուքսելի դեսպանախորհրդին գծած պատերազմական օրէնքներն ու սովորութիւններն:

8. Ընդունել սկզբամբ, հաշտարար Ատենի դրութիւնը աւելն յարմար պարագաներու առթիւ, պատերազմի առաջքն առնելու համար:

Մասնաւոր տրամադրութեամբ մը հաստատապէս որոշուած է նաեւ թէ այս օրակարգէն դուրս ո՛ր է խնդրոյ զբաղեցու իրաւունք չունի այս դեսպանախորհուրդը:

(Այս բացորոշ օրակարգը աչքի առջև ունենալէ ետքը, ա՛լ ուզողը ազատ է բըմածին հետեւութիւններ, մեկնութիւններ հանելու, վերջապէս բաներ մը երազելով՝ ժամանակ անցնելու):

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐ

Վ. Է. 24 Մայիս

Խաղաղութեան Դեսպանախորհուրդը. — Մայիսի 23 թուականաւ Լա Հէէն առնուած լուրերուն նայելով, որոնք դեսպանախորհուրդին երկրորդ նիստէն ետ-

քի թուականով հաղորդուած են, Ձէնընկեցութեան խնդիրը դուրս հանուել է դեպքանախորհուրդէն: Անգղիա և Գերմանիա չեն ընդունիր Ձէնընկեցութեան գաղափարը, ուրիշ քանի մը տէրութիւններ ալ համակարծիք գտնուելու են. այս պատճառաւ է որ դումարումը «Խաղաղութեան դեպքանախորհուրդ» կոչուեցաւ, փոխանակ «Ձէնընկեցութեան դեպքանախորհուրդ»-ի: Ծովահէնութեան համար սպառազինուած նաւերու խնդիրն ալ դուրս պիտի ձգուի Դեպքանախորհուրդի ծրագրէն:

ՍԻՐՈՅ ԶԳԱՑՈՒՄԸ

(ԱՊՐ. Է. Տ.)

Սիրուն աղջիկ, նախշուն գոհար
Կեղեցկութեան քաղաքի:

Այերդ սեւ, փարսերդ երկար,
Կեմքդ նրան սրնդաւի:

Այսեր ունիս զերթ յաւրակայ.
Հայեացք մ'անուշ ու մոլոր,
Քաղցր, դիպի՛ց ժրպիս մը կայ
Շրթունքներդ մեղրածոր:

Իսկ հասակդդ, ա՛խ իմ Ասդիկ,
Մասայ, յիւստ, գեղանի.
Լանջող անքիծ եւ ուռուցիկ.
Բազուկներդ ալ հոյանի:

Առաւօտ մը երբ ֆեղ տեսայ
Շիկնոս, զուարթ, հերարձակ,
Այն օրորէնքն արհաւ, ահա՛
Տիրեցիր դու քաջարձակ:

Հոգի մ'ունիմ ֆեղ սիրահար,
Քնեմք աղջիկ գեղայուն,
Որ յուզուած է ու վրշտահար.
Յաւ, դառնութիւն, հո՛ւր կայ հոն:

Ո՛հ, իցիս քէ սիւզ մը յինիմ
Առաւօտեան մեղմուշիկ,
Ու սուրաշով գաւմ գարնոյիմ
Զրբնաղ դեմքիդ անուշիկ:

Առուակ մ'ըղլամ քնձիս, սահուն,
Որ երբ մէջքս դու նայիս
Յոյսայ դեմքդ պայծառ, ժրպտեմ
Զերթս մէջ, նազեղիս...

Սիրուն աղջիկ, ո՛վ կոյս անուշ
Յարգէ սերքս փառ, մաքուր,
Յիշատակով քու փառաբան
Կանցնիմ օրերս յոր, ինքնուր...

ՏԻԳՐԱՆ ԵՐՈՒՆԵՆԵԱՆ

Ռուսչուգ, 12 Մայիս 99

ԲԱՌԵՐՈՒ ԴՈՐ ՍԱՀՄԱՆՆԵՐ

Գանձանակ.— Պղտիկ արկղ մը, որ յիշեալ յիշիքդ գոց սորված է:

Գետնաշարժ.— Երկրագունտիս սրբման:

Գերեզման.— Մեռելոց ժամագրատեղին, որուն օրակարգն է լուսնին:

Բանաստեղծ.— Հիմակուն դպրոցէն ելլող բոլոր տղաքը:

Ամօթ.— Հին բառ մը:

Արժանահաւատ.— Լրագրաց աղբիւրը
... խոշոր սուտերու համար:

Ազնիւ.— Կնկան տնուն է:

Ալեւոր.— Ժիւ դարու երիտասարդը:

Ապառաժ.— Վաշխառուին սիրտը, աղբատին հանդէպ:

Բարեկիրթ.— Դպրոցի տղաքը:

Դիպուած.— Բաղդին գործակալը:

Երեւակայութիւն.— Մտքին պիթքազարը:

Կեղծաւորութիւն.— Ընթացիկ դրամ:

Սուտ.— Մանրուկ դրամ, որ ամենուն բով բիւշ շատ կը գտնուի:

Սօփիայի վիճակահանութեան բաղդատմութիւնը կը վաճառին ի վառնա գըլխաւոր գործակալ սեղանաւոր Տ. Սարգիս Գաբրիէլեանի մօտ: Ա. վիճակահանութիւնը պիտի կատարուի Յունիս Գին:

ԲՈՒԲԵԼՈՆԱԿԱՆ ՀԱՅԿԵՐՈՅԹ ՄԸ

Անցեալ կիրակի օրը, տեղւոյս դերձանի նորակառոյց Փապրիգային 200ի մօտ ամեն ազդէ մեծ ու պզտիկ բանւոր աղջիկներուն հացկերոյթ մը տրուեցաւ Ասլաթայի ծովագերբի փոքրիկ ծառաստանին մէջ: Բոլոր գործաւորուհիք իրենց տուներէն մէյմէկ պնակ, անձնոց, թէյի գաւաթ և պատառաքող առած՝ նոյն օրը կանուխէն՝ ճապանակ ու խփով փութացեր էին ՚ի Ասլաթա: Անմիջապէս մեծ կրակ մը պատրաստուեցաւ, որուն վրայ սկսաւ եռալ թէյին ջուրը: Երիտասարդ պարոն մը, որուն գլուխը առտուրնէ բաւական տաքցած էր ոգելից բմպելի շոգիով, օրիորդի մը քեջեղիմը ուսերուն վրայ ձգած, կնիկ-ապլայի պէս կրակին քովը կը սլքտար, մերթ ընդ մերթ սիրային կատակներ ընելով մէկ քանի գործաւորուհիներու հետ: Զի մօտ, նանք յիշել թէ, բոլոր գործաւորուհիներուն մայրերը ու աղբականներն ալ ներկայ էին, որոնք քիչ մը հեռուն նստած՝ ահանատես կըլլային:

Երկու կողքերով փոխադրուած հողէ մեծ կուժերով մածունը ու 12 հատ խորոված գառնուկները ծառի մը շուքին տակ դրուեցան. թող ասոնք քիչ մը հանգստանան և թէյն ալ պատրաստուելու վրայ ըլլայ, մենք երթանք միւսիւրի մը մօտ, որ հանգեսը կը բանար հետեւեալ կերպով.

Բոլոր աղջիկները ու մէկ քանի առաջնակարգ երիտասարդ պաշտօնեաները շրջանակաձև նստեցնելէ ետքը՝ թաշկինակով մը իր աչքերը կապեց ալջ-կապուկի ձևով ու ձեռքն ալ թաշկինակ մը առած սկսաւ անոնց բոլորտիքը դառնալ: Մէկ երկու շրջան ընելէ ետքը, թաշկինակը ձգեց գեղանի աղջկան մը առջև, աչքին կապը քակեց ու նոյն օրիորդին թեւը մտած՝ մէկ երկու անգամ դառնալէ ետքը՝ ի նշան շնորհակալութեան (?) անորայտերը... համբուրեց, յետոյ՝ օրիորդին աչքերը կապելով, հրամայեց իր օրինակին հե-

տելիլ ու ինքը, գնաց, անոր տեղը նստաւ: Օրիորդը մէկ երկու շրջան ընելէ ետքը թաշկինակը անգիտութեամբ ձգեց երիտասարդի մը առջև, որ անմիջապէս տեղէն ցատկելով, աս ալ օրիորդին երեսին համբոյր մը դրոշմեց: Այն ատեն հանդիսատեսներու կողմէ գիտողութիւններն սկսան: Թէեւ թարգման մը կը ջանար համոզել ծնողները թէ Անգղիական սովորութիւն մ'էր այս, բայց անոնք մտիկ չէին ըներ ու կը պատասխանէին թէ հոս Անգղիական սովորութիւնները չեն անցնիր:

Ծնողաց այս գիտողութիւններուն վրայ նոյն արտաւոյց խալին վերջ տրուեցաւ. հակառակ մէկ քանի պաշտօնեաներու կողմէ յայտնուած փափագին, որոնք յակամայս կը զըրկուէին նոյն հաճոյքներէն:

Երբ ծաշի նշանը տրուեցաւ, գործաւորուհիք նստեցան. իւրաքանչիւրը իր անձնոցը փռեց ու պնակը առջին առաւ. նախ մածուն կերան, որուն կուժերը պարպուելէ ու մաքրուելէ ետքը պատրաստուած թէյը անոնց մէջ լեցուցին, ուրկէ ամենքը կերթային գաւաթներն լեցնել: Թէյը լմնալէ ետքը հրաման ելաւ թէ պնակները պէտք է ներկայացուին մատակարարին, խորոված միս առնելու համար: Թշնամի բերդի մը վրայ յարձակելու պէս ամենքն ալ իրար հրմշտկելով միահաձու կը վազէին մատակարարին վրայ ու պընակներնին ներկայացնելով՝ «պէնիմ թապալը» մատա գոյց կը պոռային: Եղան շատեր, որ իրենց բաժինը կուլ տալէ ետքը երկրորդ երրորդ անգամ ալ մատակարարին վրայ վազեցին, որուն չի խենդենալը՝ պէտք է հրաշք համարուիլ: Ու թէեւ կարգ մը գործաւորուհիք կը դժկամակէին այս բաբելոնական սեղանին մասնակցելու, բայց Միւսիւն անոնցմէ տգեղ եղողներուն կը հրամայէր հնազանդիլ, իսկ գեղանիներուն ալ երեսները... շոյելով զանոնք թեւը առած կը բերէր կը նստեցնէր:

Գործաւորուհիներուն ծաշէն վերջը Փապրիգային երկսեռ պաշտօնեութիւնը սեղան նստաւ. այս սեղանին թագուհին էր գեղա-

նի գործաւորուհի մը, որ իր շարժումներով ու խօսքերովը մեծ հաճոյք կը պատճառէր սեղանակցաց :

Այս պահուս հանդիսատեսներու մէջ ա՛լ սկսած էր բարձրաձայն բամբասանքը, բայց կարեւորութիւն չէր տրուիր. ըստ բանին թէ՛ «ազատ էր ամեն մարդ ուղածը ընելու» :

Ճաշէն վերջը, յաքեռիկներու ձայնով ընդհանուր պարը սկսաւ. սեփոքեքեռ ժենդալներէն մէկը, որուն աչքերը պիւրայի զօրութենէն այլեւս մթագնած էին. տալմաի տեղ՝ հացկերոյթին բեռերը կրող էշուն պարանոցին փաթառեցաւ ու սկսաւ ցատկուտել :

Նոյն միջոցին կատարուեցաւ նաեւ շաքարի եւ ֆըստրիսի բաշխումը, որ ամենայն արդարութեամբ տեղեկներուն քիչ ու գեղանիներուն լիափուռն կը տրուէր :

Մինչեւ իրիկուն բաբելոնական խառնակութեամբ ուրիշ մէկ քանի խողեր ալ ներկայացուցան, ու հանդիսականք տուններին վերադարձան, հետեւին տանելով այն արտառց տեսարաններուն տպաւորութիւնը :

Ահա այսպէս ազատամտութիւնը ու բազարակրթութիւնը (?) նոյն օրը գործնական կերպով փայլեցան իրենց սկզբունքներով, օրէնքներով ու կանոններով, եւ կարծես կը հրաւիրէին հանդիսատեսները՝ բաց թողուլ արեւելեան պարկեշտութիւնը ու հետեւիլ եւրոպական ազգերու գռեհիկ դասակարգելու խայտառակ ընթացքին, որուն՝ ոմանք, ազատամտութիւն (') անունը կուտան :

ԴԻՏՈՂ

ԶԱՆԱԶԱՆՔ

Աշխարհիս ամենէն շատ ոչխար ունեցող երկիրն է Հարաւ. Ամերիկայի Արժանութիւնի հանրապետութիւնը. երկրին ոչխարներուն թիւը 90 միլիոնի կը հասնի :

— Դէմքին գոյն տալու համար քուտրաւ

բսեղն առողջութեան հակառակ բան մ'է : Փոշին մորթին ծակտիկները լեցնելով զանոնք կ'ուռեցնէ և պատճառ կ'ըլլայ ամբողջ երեսի մորթին կոշտանալուն : (Ծ. Թարգմ. — Կ. Պոլիս գտնուած ատենս, զիտած եմ թէ՛ մեր աղգակցուհիներ այս կեղծաւոր փոշին քիչ մը շատկէկ կը գործածեն. վախճամ թէ չը հաւատան եթէ ըսեմ թէ՛ Անգլիոյ մէջ «փողոցային կիներն» և թեթեալարոյ պարուհիները միայն քուտրաւ կը բսուին :)

— Պալէրիոյ մէջ 28 հատ մատիտ շինող գործարաններ կան. ասոնց մէջ կ'աշխատին 15,000ի մօտ գործաւորներ, որք՝ այրեր, կիներ և երկու սեռէ անչափահասներ են :

— Անցեալ տարի մեռնող Պիզմարք իշխան իր երակներուն մէջ բշիկ մը հրէական արիւն ունէր. հաստատուած է թէ՛ իր մօրը հայրը հրեայի գաւակ մ'էր : (Ատով կը բացատրուի ամէն բան) :

— Բոլոր կարի մեքենաներուն տասնէն ինը հատը Մ. Նահանգներուն մէջ կ'շինուին : Այդ երկրին մէջ 200 հազարի մօտ անձեր այս ճիւղին կ'աշխատին, և ամէն տարի կ'արտադրեն կէս միլիոնէ աւելի կարի մեքենաներ :

10,000 ոսկինոց մասեալ մը (կերտակոյտ) . — Վերջին բնութիւնները հաստատած են որ՝ աշխարհիս երեսը գտնուած մանեակներէն ամենէն թանկագինն է Ամերիկացի միլիոնատէր Վանտէրպլիթինի իր ամուսնութեանը առթիւ տիկնոջը ընծայած մանեակը :

Այս մանեակը խիստ հազուադէպ ու փայլուն քրքանքի ու եագութեամբ զարդարուած է, ամենէն պղտիկ եագութքը 800 ու ամենէն մեծը 1500 ոսկիի առնուած են : Միւս բարերն ալ այս երկու գիներէն շատ պակաս արժէքով առնուած չեն : Սոյն մանեակը 6 ամսեան մէջ շինուել է : Քարերուն ամէն մէկը՝ մեծ կաղնիի խոշորութիւն ունին եղեր :

Թարգմ.

ԿԵԼ ԳԱՆԹԱՐԱՒ . .

(Շարունակութիւն)

— Ապա ուրեմն ես պէտք է այս գանձը բախն ստուգաբանութիւնը ընեմ ձեզ, որմէ վստահ եմ թէ շատ գոհ պիտի մնաք :

— Ինծի նայէ, թէ որ անցած օրուան «Տիկիկն» բառին արմատը դիտուի եւ, ըսածիդ պէս պիտի ստուգաբանես՝ փա՛ղ անցիր :

— Չէ՛, չէ՛, պէտք է իմացնեմ, և զձեզ ժամափաճառ ընելուս փոխարէն, ամենուդ ալ մէյմէկ խաճառէ կը խմցունեմ :

— Գաւաթ մը խաճառէի համար մը տիկ կլուր՞ մի ես . . . դուն հիմա նստէ՛ որ կշռուիս :

— Չէ՛, չէ՛, մտիկ պիտի ընեք : Դաւն բառը ծեծ ըսել է, քարն ալ՝ քարոյի բառին արմատն է, որուն ռ տառը աղաւաղումի փոփոխելին բանուելով՝ ր է եղեր . հետեւաբար, գանձքար բառը, որուն ծնունդը ինչպէս ըսինք, հայկական է նախ բան զբրիստոս, պիտի թարգմանենք ծեծի վրայ քարոյի . հասկցա՞ք .

— (Ընդհանուր զարմացում)

— Հասկցա՞ք հարցում եմ .

— Աստուած շատ բաշեւ չի տայ, պատասխանում եմ .

— Հա՛, այդ Աստուած շատ բաշեւ չի տայ բառերուն արմատները գիտէ՞ք .

— Քեզի բան մը ըսեմ՝ պատուելի, հոս կշռուելու տեղ է, արմատ բնութիւնը տեղ չէ՛ սանկ նստէ՛ նայիմ . . . կամաց . . . ծուռ կը նստիս կոր, քիչ մը շիտակ նստէ որ հաւասարակշռութիւնը գտնեմ . . . ա՛յ, ա՛յ, ա՛յ, ելի՛, ելի՛, ելի՛, խանթարը պիտի կոտրես .

— Ինչո՞ւ .

— Աղբար, քս ո՛րչափ ծանրաբեռնեալ ես արմատներով . 200 քիլոէն ալ աւելի կուգաս կոր .

— Ուրեմն մնաք բարով :

— Երթաս բարով, քիչ մնաց, 10 փառայի համար 100 դրուշի խանթարը վրայ պիտի տայինք, ինչպէս որ դուն ձիւնարէ ֆէօդկէսի ու Տապալոյ քոզիին արմատը գտնելու համար միտքդ ալ վրայ կուտաս կոր փառադ ալ : Ե՛՛ ճանրմ, կէլ գանթարա, կէլ գանթարա : Նէ՞ օ Սողոմէ թէթէ, նէյէ՛ կէլտին .

— Կէլտիմ գահէր, սէն պէնի գանթարտա թարթարն ըսա, շու Նէմզարկիկին նիշին թարթայօրսըն :

— Քի՞մ իմիշ օ Նէմզարկիկին .

— Թէ պա՛գ, եօգարտան կէլիօր, օնուն էթտիյի գըլափուզուզլարըն եանընտա պիպիմ գըլափուզուզլարը հիշիճիք տէմէք տիր . գուլաղընը պանա կէթիր, սանա պիր շէյ սէօյլէյէճէիմ . . . թէ էօյլէ, աղնատըն մը .

— Աղնատըմ .

— Էօյլէ իսէ թարթ պագայըմ, հէմ հայճա կիւզէլ պիլիր, հայճա գօնուշ .

— Բէք էյի . . . հրամմեցէք, տիկին խոնաւզուր . կը բարեհաճիք կշռուիլ .

— Ես արգէն մէկ բանի անգամներ կըշռուած ըլլալով, այլ ես պէտք չունիմ .

— Այդ ուրիշ, նայէ՛ ատոր ըսելիք չունինք .

— Նէ՞ տէյօր պիրէ Բոթոթիկ .

— Պունտան էվէլ պիր քաշ տէֆաթարա թըլմըշըմ, արթըգ լիւզումու եօգ տէյօր :

— Է՛ տօղրու տըր, տօղրու . կէշէնլէրտէ պիր եէրտէն 4 նաբօլէօն ալըպ գըզլարընա էյի պիր ուշագ պուլաճարմ տէմիշ ամա, պէճէրէմէտիյինտէն էթիւրիւ բարայը կերի իսթէմիշլէր, վէրմէմիշ տէ էյիճէ թարթմըշլար :

— Կէօրտիւն մի ես, թարթըլմըշ վէ տառասը ալընմըշ օլանլարը պիր տահա թարթմագ լաղըմ տէյիլ տիր :

— Պ . Բոթոթիկ, Հայելիի խմբագիրը մէկ երկու ժամէ ի վեր կեցեր քեզ կը դիտէ կոր, ան ալ չի կշռն .

— Աղէկ ըսիք, հոս եկո՛ նայինք, Պ . Փափաղեան .

— Ինչ կըսես, Բոթոթիկ .

— Մ՛երկնցներ, ես խաթըր կէօնիւլը սուլածը բանը չիյտեմ . քեզ ալ պիտի կշռեմ :

— Բայց . . .

— Բայցը մայցը հոս խանթարին վրայ է . . . սանկ հանդարտ նստէ նայիմ . (կըշռելով) օ՞ օ . ա՛ս ինչ է . 200 քիլօ կը քաշես կոր :


— Խենդեցա՞ր բոթոթիկ . 200 քիլօ մի . . .

— Է՛, մի զարմանար . հիմա հաշիւը կիւմանաս . այնչափ մարդոց մարմնիւնները խաղանկիւղէ փոխարէն՝ անոնց կողմէ կանակդ բնագուած 160 քիլօ անէծքները ու բանբասանքները ղեղչիւղէ պէս՝ 40 քիլօ կը մնաս տահա ինչ կուզես :

— Ո՛վ չարաճիճի, այդ անէծքներուն ամենքն ալ պէտք է քեզի վերաբերին, բանի որ անոնց լրաբերը դուն ես :

— Լրաբերը ես եմ նէ՛ լրագրին մէջ դնողն ալ դուն ես . հէմ, պա՛րապ տեղը ինքզինքդ արդարացնել մի՛ աշխատիր . խօսքը մէջերնիս՝ դուն ալ քիչ մը տեղդ մնաս :

Այս միջոցին նամակատան ցրուիչը քառթբութ մը ներկայացուց բոժոժիկին . որ կարգալուն պէս՝ խանքաւը շալկեց ու նոյն օրուն թոյնոյ վառնաէն մեկնեցաւ :




ԱՅՎԱԶԵԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Աղէքսանդրիայէ կ'դրեն թէ Աբրահամ էֆ. Այվազեան կարող եղած չըլլալով ներկայ գտնուելու վերջերս հոն կատարուած յուզարկաւորութեան մը, այս անգամ նորընտիր թաղական խորհրդին կողմէ հոգեհաց մը տրուեր է ի պատիւ «Ճամբորդի նօթերուն» անսպաս հեղինակին : Ճաշացուցակը մեծ մասամբ արեւելեան ոճով էր, և կ'բաղկանար ի մէջ այլոց հետեւեալ կերակուրներէն .

1. Երկու տեսակ արեւելեան ապուր, Տիւրքիւն Զօրպասը, կաղմուած պարարտ մսի իւղոտ պատառներէ, և իշկէմպէ չօրպասը : 2. ԸՍտախսօ Բուժէլի Հիսարի, և ընտիր ձուկ կարմրախոյտ Ասլիլ 1ի, (Բուսասօն Տ'Ավուիլ) . 3. Եսլանճը Տօլմա ա ղ'Այվազեան, եգիպտական Մահսուէ բրինձով, առատ սոխով, և ձէթն յատկապէս իտալիայէն բերուած՝ թաղ. խորհրդին նորընտիր երիտասարդ վաճառական Բ. ատենապետին ճեռամբ . 4. Սու պէօրէյի, ի պատիւ ջրախառն նկարագրութեանց համալաւոր լրաբերին . 5. Մաքարնա, ա ղ'ա Բօժքի . 6. Խորոված Բիւթանական թուշուններու . 7. Քէօֆթէ Սպիւմական . 8. Լուբիա

առատ բիյազով . 9. Եղինձ (բիւււ) սունկով (Մանքաւ) . 10. Գինիներ, որոց անունները քաղուած Այվազեան էֆ.ի յօտալուտ գրքէն՝ գինիի տեսակներուն անուններուն վրայ, հինգ տարուան իշախաղող, տասն տարուան Միւշբիւլէ, և փրփրալից Շանբանեա Գարալահանա խաղողի, այլովքն հանգերձ : 11. Աշան. դերք, ջրալից պանան (Մօս Ընկերութեան) և հիւթալից արմաւք մեծահարուստ Ապատիյէներէն Վերին Եգիպտոսի : 12. Պաղպաղակ Գանթէլի, և Կլաս Ույսուրմասիօն : 13. Խահվէ պարկով, և շաքար կողովով :

Բիւզանդիոն



Ուն մէյտանի տան մը մէջ .

Հայրը—Ձապե՛լ, ըսէ՛ նայիմ, վարժարանին մէջ ի՞նչ դաս կ'առնես կոր .

— Հայերէն, Գաղիերէն, Պուլկարերէն, Թուաբանութիւն, Աշխարհագրութիւն . Պատ . . .

— Հայերէն քերականութեան մինչև ո՞ր մասը հասար .

— Բայերը .

— Ի՞նչ բայ սովորեցար .

— Սիրե՛լ և Ուզե՛լ .

— Ուրի՛շ .

— Ուրիշ բան չի սորվեցայ, հայրիկ . վարժուհիս ըսաւ որ եթէ այս երկուքը աղէկ սորվիս, ամեն բան սորված կ'ըլլաս :



Հռովմի մէջ հարս ու փեսի գերեզմանի մը վրայ սա տապանագիրը կը կարդացուէր .

«Կեցի՛ր անցորդ, ու տես սա հրաշալիքը, ահա երկու հարս ու փեսայ, որոնք չեն կուռիւր :

«Հայելիի Բ. տարւոյ թիւերն ալ կաղմուած կը վաճառին ՚ի գին 10 ֆրանք, թղթատարի ծախքը խմբագրութեան վրայ ըլլալով :




ՍԱԷՏԻՆԵՆԻԷ

1899 Մայիս 19 Չորեքշաբթի գիշեր ժամ ճիշդ 9


ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆ ԱՆՁՆՈՒԻՐ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ ԽՄԲԻՆ

ԱԶԱԿՅՈՒԹԵԱՄԲ ԿԱՐԳԱԴԻՐ ՄԱՍՆԱԽՄԲԻ



Ի Ն Պ Ա Ս Տ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՎԵԼՈՑ



ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՀԵՐՈՍՆԵՐ

Իրական թատերախաղ 6 արարուած և 4 պատկեր:

Երկասիրութիւն Պ. Տ ԳԱԼԻՄՃԵԱՆԻ

ԱՆՁԻՆՔ

Պէտո, Գաւաշ գիւղէն պէտ հերոսային խմբին. — Պ. Է. Սմաւոս
 Փաշո, Շուշանց " Պէտոյի ընկերը. " Կ. Պալճեան
 Վարդո, Մոկո " " " " " " Գ. Սիրուն
 Տէր Կոմրտաս, քահանայ մը " Գ. Տիգրան
 Աւօ, Պէտոյի հայրը բանտարկեալ " Բ. Գեղամ
 Խաչօ, բանտարկեալ Բարսեղի հայրը " Գ. Յովակիմ
 Կուլօ, Պէտոյի մայրը Հերոսուհի. Տէ. Պ. Պատուեաճեան
 Նազէ, Կուլօի ութ տարեկան աղջիկը Օր. Ն. Արաքսի
 Շաքիր փաշա, քննիչ Պ. Օ. Տէմիրճեան
 Շէյխ Զալլատ, Հայտէրանցի քիւրտերուն շէյխը " Գ. Յովակիմ
 Հասսօ Քիւրտ պէյ մը. " Ն. Կարպիս
 Համզա " " " " " " " Ա. Արամ

Հայ հերոսներ, Քիւրտեր, Թուրք զինուորք, Բանտապահ, Ուրուականք:

Գիշեր — Ա Կարգ Ըստ կամի Ա. Կարգ 10 ֆր. Բ. 5, Գ. 3
 անթիւ նստարան 2, Մուտք 1 ֆր.

Ընդունուած տոմսակներուն գիները պէտք է կանխիկ վճարել: